

սարան մը կ'ընծայեն : Պարեթէ բոլոր գործարանին մէջ գործաւորաց չորրորդ մասը այս բանիս կ'աշխատին . խարտ- մունքը , ինչպէս նոր մետաղէ գրչի մը վրայ կրնայ երենալ , երկու կերպով կ'ըլ- լայ , մէկը գետ՝ ի երկայնքը , միւսը գետ՝ ի լայնք : Վարձաւոր կինը գրիչը պացա- նով կը բռնէ դարձող անուի մը վրայ ինչուան որ կոկուած փայլի :

Հիմա գրչին ձղքելու գործարանը երթանք . ձեղքը բացող պողպատ գոր- ծիքին լիկ լայնը ամէն ուրիշ ձայն կը խափանէ . այս գործողութիւնս մէկ մամուլով մը կ'ըլլայ , գործաւորը ասոր կոթը բռնած կը մղէ ձղքող պողպատը :

Պարչաց վրայ վերջին գործողութիւնն է բռում (Վեհական առաջ) խիժազանգ ջրով մը , Խնկէ ետև կուգայ ընտրանիքն ¹ , որ է գրչաց ծայրը սիմել բռթ մատին վրայ դրուած ոսկորիկի մը վրայ . ասով կ'որոշէն գրչաց տեսակն , աղնիւ , միջակ ու հասարակ աստիճանի : Խնայս կեր- պով գրիչը կատարելապէս կը ձեւանան . ուրիշ բան չի մնար բայց եթէ թղթե- րու վրայ շարել կամ տուփերու մէջ գնել : Պատիկ ձեռքեր գրչաց տրցակ- ները կը կըռեն , կը դիզեն , կը շարեն թղթէ աղուորիկ տուփերու մէջ , ու վրան փայլուն պիտակ մը ² կը կպցընեն , որ կը

նշանակէ գրչին որպիսութիւնն , և շի- նուած տեղը՝ ստոյգ կամ սուտ :

1855ին արուեստից հանգիսին Խնգ- ղիա երկու առաջին կարգի միտալ ու չորս երկրորդ կարգի միտալ ընդունե- ցաւ : Պաղղիա մէկ առաջին , երկու եր- կրորդ կարգի միտալ : Պողպատ գրիչ- ներու բաւական Ճկունութիւն տրուե- ցաւ . կը մնայ գտնալ հնարք մը թա- նաքին ժանգէն շապականելու համար . այս բանիս դարման սեպեցին գրիչները կապուտագոյն , պղնձագոյն կամ ու- կեզօծ ընել , բայց շատ չյաջողեցան : Խնոր համար մտածեցին ոսկիկ , բլա- գինէ և յակնթի ու ագամանդի ծայրով գրիչներ շնել . բայց ասոնց գինը բարձր ըլլալով գործածութին ալքիչէ : Ո՞ւ- տաղէ գրչաց գինը 1830ին Պիրմինկէմի մէջ տրցակը 8 շլլին էր , 1851ին իջաւ ինչուան 6 բէնս . բայց գործաւորաց վարձքը աւելի բարձրացաւ . աղէկ գոր- ծաւորները շատ սուզ կ'աշխատին . պըզ- տիկ աղջիկներ շաբաթը 5 , 6 կամ 7 շլլին կը վաստըկին , իսկ մեծկակները 12էն 14 : Վարձատէրներու ջանքով փոխադարձ օգնութեան ընկերութիւն- ներ հաստատուած են . ընկերագրուող մարդիկ ամիսը 6 բէնս կը վշարեն , իսկ կանայք 1 բէնի :

Մանր գիտելիք :

Բառականութեաց ընկերութիւն ³ : — Լոնտրա ընկերու- թիւն մը կայ որուն անգամները միայն կանանչե- ղինք կ'ուզեն սնանիլ , և ռուտական աղանդ մը կը կազմեն , որ հիմա իբր 3,000 հետևող ունի :

Ահաւասիկ ասոնք են իրենց հիմնական կանոն- ները :

Ա . Զսպաննել կենդանի ամենաին :

Բ . Չուտել երբէք ոչ միս , և ոչ այն ամենայն ինչ որ կենդանեացմէ առաջ կու գայ . կաթը միայն նորածին տպայոց թոյլ տուեալ է : Ոմանք հեր- ձուածողք կը գիշանին սնանելու . խոտաճարակ կենդանեաց կաթով , ըսելով թէ մսի հետ ամե- նաին վերաբերութիւն ըսւնի :

Գ . Զազել ամենաին կերակուրները , և ոչ պատ- րաստել զանոնք որ և իցէ համեմք :

¹ Գ.լ. Triage.

² Գ.լ. Etiquette.

³ Անգլ. Vegetarian Society.

Դ . Խոտիւ արգիլեալ է բաժնելու թեփն ալիւ- րէն :

Ե . Հրաժարել որ և իցէ ըմպելիքէ . նաև թէյէն և խահուէէն . պարզ ջուրն է բնական ըմպելիք :

Զ . Մարմնական կրթութիւններն հաւասարա- պէս հարկաւոր են բարոյական վերակենդանու- թեան . անոր համար պէտք է անգուլ պարապի- մարմնակրթանաց , ըղալու , և այլն , ամէն հա- սակի , և երկուց սեռից :

Է . Հագուիլ պարզ հագուստ մը համեմատ բնութեան , որոնք ենթակայ չըլլան յարափոխոր- քացան նորածնելութեանց :

Ընկերութեանս հիմնադիրն է Կիւդըն անու- նով մէկ մը , որ յամին 1811 անգլիարէն գիւք մը հրաժարակեց շատ հետաքրքրական , որուն մակա- գիրն էր Վեհական դիմունիւն կամ Զարաֆալ- լիւն բառական պահպանութեան , և հետևեալ տարին ընկերութիւն մը հաստատեց , որ սկզբան քանի մը հարթւր անգամներէ միայն կը բաղկանար : Ա-

ռազմին տեղեկութիւնն ընկերութեանս վրայ 1814 տարւոյն հրատարակուեցաւ, որուն մէջ կը տեսնուեր որ երեք տարի անընդհատ վաթսուն հոգի միայն կանաչեղինօք ու պարզ ջրով ապրեր են, և նախանձելի առողջութիւն մը ունեցեր են: Ոչ ոք այս ընկերակիցներէն մեռեր է նոյնչափ ժամանակուան մէջ: Տասնընօթը հոգի հիմնադրին ընտանեացմէ: ինչպէս նաև Լոպ բժշկին ընտանիքէն, որ Նիւգընի յաջորդեց, եօթը տարի այս պահէցողութեամբ անցրուեր են, և թէպէտ մէջերնին մատաղ աղայք ալ կային ու հիւանդ մը, մարդ չէ մեռեր, և արտաքոյ կարգի հիւանդութիւն մըն ալ չէ պատահէր իրենց: Ուստի սկսան լոյնարամասնաւոր մատադրութիւն ընել այս վիճակագրութեանս, և շատ ժողովոց մէջ նիւգընի աղայոց վրայ կը խօսուեր իրը կատարեալ օրինակը գեղեցկութեան և ըստ բարոյականին հեղաքարոյք և համբոյք, պատճառը բերելով անոնց սննդէան կերպը:

Այս ընկերութիւն վերահաստատուեցաւ 1847 տարին հիմակուան սկզբանց վրայ ու ամէն տարի Լոյնարահասարակաց ճաշ մը կու տայ, ուր բաց՚ի կանաչեղինաց ուրիշ բան չուտուիր: Տարուէ տարի տեղեկութիւն մըն ալ կը հրատարակուի, ուր կը տեսնուի ընկերութեան յառաջադիմութիւնը, և կ՚տպացուցուին դրութեանս օգտակարութիւնը: “Բուսական ցեղագետութիւնը, ու կըսէ այս տեղեկութիւնը, կը մատակարարէ մեզի այնչափ բազմաւեսակ արդամիւնէր. մանաւանդ եթէ աւելցընենք անոնց վրայ օտար կըմայից բերքերն ալ, որոնք կամ իրենց բնական վիճակաւը և կամ խոհակերական փոփո, իսութիւններով կրնան ամենայարմար ըլլալ որ և իցե ապստամբ ստամբաց անգում: Դժբաղ գարբար բնութեան այս առատածիր պարգնեն. ըլլ մասկերք իրենց սեղանոյն խորովածացն ու պիտիւնը վրայ կը փախցընեն, և կամ ճարակ կու տան կենդանեաց, ու այսպէս ամենաբանաւոր բանաւոր գործածութեանց անօգտակար կը նեն զանոնք: Ցորենը, հաճարը, գարին, բրին, ձը, սական, դաշինուա, մնրացրենը, աեսակ տեսակ որուանք, բակլայը կը մատուցանեն գոյացական սնունդ մը տարուցն ամէն եղանակը մէջ: Տանձով, խնձորով, և ընդհանրա, պէս ամէն տեսակ պտղօք, որ կը պահուին, կրնայ պատրաստուիլ ամէն տեսն առատ ու ազ նուական սեղան մը. որ պարարէ աչքն ու քիմ քը. հոգին և մարմինը, Մեծտպէս կը ներ բողուին գետափախնձորները, Խորեն-Քնէլը, պտղօց կարկանդակներն, որոնց մէջ պտուղները կը փախանակնեն կարագի, և վերջապէս ընդեղինաց պահածոյքն որ հեռուն կրնան զիկուիլ ուր թարմ ընդեղէնք չեն գտուիր:

Իրեն նախնիք կը համարի ընկերութիւնս հնոց մէջ Պիւթագորաս, Պորփիր, Պլուտարքոս, Եպիկուրոս. միջն գարու մէջ՝ Դրայլն. եօթնետասներորդ գարուն մէջ՝ Հէյն բժիշկը. նորոց մէջ՝ Լիննէոս, Պէռնարտէն ու Սէն-Բիէր, Ֆրանքլին, և այլն: Եւ հիմն այս սկզբանս վրայ հաստատուած է թէ մարդուս անդամազնական կազմութիւնն ստեղծուած է կանաչեղինօք մնանելու:

Նոր հւրբակ: — Լութէր աստեղաբաշխ Պիլքի դիտարանին: Տիւսակլտորֆի մատերը, որ անուանի է եօթն աստեղատապից գիւտառին, որոնք հրատին և լուսնթագին մէջ տեղուանքը կը գտանի: այս մարտի 24ին գիշերը նոր աստեղատապի մըն տղաները է մետասաներորդ առաջի մեծութեամբ, որով մինչև հիմա 58 աստեղատապի կըլլան:

Օրէւեցի: — Մուկուա գեղեցիկ օդերևոյթ մը տեսնուեր է այս մարտի 1ին: Երեկոյեան ժամ 9 3/4 մեծ Արջին հարաւային արևմտեան կողմը սկսաւ աստղ մը ածել, մինչեւ լրացեալ լուսնի մեծութեանն հասաւ և ատրաշէկ երկաթի գոյն առաւ, առանց ցայտեցրնելու կայծ և սփռելու լոյս: Եւ այսպէս տեսց անփոփոխ մինչև ժամ 11 1/2, միայն այս աարբերութեամբ որ լոյսը մերին կը պայծառանար և մերթ կը նուազէր: Կէս գիշերի մօտ այս աստղն սկսաւ շիջանիլ, և ձիգ ժամ 12ին բողորովին աներեւութացաւ, թողով տեղը սկալ բիծ:

Ավանձնութիւն: — Ալէկ զցուշացիր տղաբդ չկախցընել, և մատադիր եղիր որ ոչ ծառայիք և ոչ այլք վախցընեն զանոնք, վասն զի չկայ բան մը որ այս անմեղաց թէ բնականին և թէ բարոյականին այնպէս վիսասէ, ինչպէս վախիր: Բաց՚ի բազմա թիւ օրինակներէն զոր յառաջ կը բերեն բժշկական կամ մատեանք, և անոնց սարսափելի հետեւանքները կը պատմեն, յիշատակնելք հօս երկու նորագոյն գիպուածներ ալ, զոր Պելճիոյ ցագրի մը մէջ կը կարգանք. որոնք մեծ վկայութիւն մը կու առաջ այս ձմարտութեանս: Տղայեկ մը իր երկց եղարքն հետ գետնափոր մութ մմերանոցն իջան: Երբոր մէջ տեղն հասան, երիցուն խելքին ինչ փչեց, ձեռքի կանթեզը մարեց, և սկսաւ փախցելով պուալ աւադիճուին եկաւ, զքեզ պիտի ուտէ: Այս ձայնէն տղայեկն որ մութն էր մնացեր, կարծելով թէ իրաւոյնէ աւադիճուին եկեր զենքը պիտի ուտէ, այնչափ վախցաւ ու ահուեցաւ, որ մարեցաւ գետին ինկաւ մեռելի նման փայտ կտրած: Այս անգութ կատակողը տեսնելով որ եղբայրն ետեւն ցքար, նորէն վառեց ճրագն, ետ գալձաւ ու քար կորեցաւ երբ տեսաւ այն խեղճ տղայեկն որ ամենեկն կենաց նշան մը չէր տար: Օգնութիւն կանչեց, ընտանիքը վրայ հասան, շուտ մը բժիշկ բերուեցաւ, որ ժամանակէ մը ետև զնչասպառն ի կեանս կոչեց, բայց լեզուն կորսընցուցըներ էր, և կը վախցուի թէ մինչև վերջն այնպէս պիտի մնայ:

Ուրիշ տղայ մըն ալ որ իր պզսի եղբօրն հետ կը պառկէր, անոր քուն եղած ատենը բարձին վրայ քանի մը ողջ գորտ գրաւ, որոնցմէ մէկն եղրօրն երեսը ցատկեց: Յանկարծակի արթըննալով տղան, սարսափելի վախ մը տիրած վրան անկողնէն գուրս ու կուզէր փախցիլ, բայց երեսի վրայ գետինն ընկաւ ու սկսաւ տապլուկիլ, որ հազիւ առողջացաւ երկար ու իմաստուն ինաւերէ ետև: Բայց այս խեղճ տղուն ալ լեզուն բռնուեցաւ, մանաւանդ վախ կայ թէ չբացուի երբէք: